

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 մարտի 2014 թ.

N 142-Ա

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 14-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1-Ն որոշման 17-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է**:

Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի ուսումնասիրության միջոցառումների 2014 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ

I. Ընդհանուր դրույթներ

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում կատարված վերջին տարիների երկրաբանագնահատողական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նախկինում կատարված երկրաբանահետախուզական աշխատանքները ավարտին չեն հասցվել և այժմ լրացուցիչ երկրաբանական ուսումնասիրություն են պահանջում: Այս առումով, 2014 թվականին, սույն ծրագրով նախատեսվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի երկրաբանական ուսումնասիրության միջոցառումներ:

2. Երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու համար «Արցախի երկրաբանական էքսպեդիցիա» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հասանելի են երկրաբանական տեղեկատվությունը, մասնագիտական ունակությունները, տեխնիկական հագեցվածությունը, երկրաբանական ուսումնասիրության փորձը, ինչպես նաև այլ միջոցներ, որոնք նպատակաուղղված են ձեռնարկելու սույն ծրագրի շրջանակներում նախատեսվող բոլոր աշխատանքները:

II. Երկրաբանական ուսումնասիրության միջոցառումների նպատակը և խնդիրները

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի ուսումնասիրության միջոցառումների 2014 թվականի ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) նպատակաուղղված է.

1) հանրապետական երկրաբանական ֆոնդի, ինչպես նաև օգտակար հանածոների հանքավայրերի և հանքերևակումների կադաստրի ձևավորմանն ու վարմանն ուղղված աշխատանքների իրականացմանը.

2) հանրապետության տարածքում նախկինում հայտնաբերված հանքերևակումների և հանքայնացված կետերի հանքաբերության հեռանկարայնության գնահատմանը.

3) հանրապետության տարածքում նոր հանքերևակումների և հանքայնացված կետերի հայտնաբերմանը և նրանց հանքաբերության հեռանկարայնության գնահատմանը:

2. Ծրագրի հիմնական խնդիրն է հանդիսանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լեռնահանքային արդյունաբերության համար հանքա-հումքային հենքի ստեղծումը:

III. Ծրագրային միջոցառումների համակարգը

1. Ծրագրով սահմանվում են 2014 թվականին իրականացվելիք հետևյալ միջոցառումները՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի ուսումնասիրության վերաբերյալ առկա տեղեկատվական նյութերի և հաշվետվությունների հիման վրա հանրապետական երկրաբանական ֆոնդի ձևավորման աշխատանքների իրականացում, այդ թվում երկրաբանական ֆոնդի տվյալների սկանավորում և թվայնացում ընդերքօգտագործողներին տեղեկատվությամբ ապահովելու համար.

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում հայտնի օգտակար հանածոների հանքավայրերի և հանքերևակումների անձնագրերի կազմում կադաստրը ձևավորելու և այն վարելու համար.

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի նախկին ուսումնասիրություններից հայտնի Շուշիի շրջանի Մեծ շեն, Եղցահող, Դաշտահող, Ծաղկաձոր (Տասը վերստ), Քաշաթաղի շրջանի Վաղագինի, Ոսկեսարի, Վազգենաշենի և Շահումյանի շրջանի Թութխունի հանքերևակումների տեղամասերում ստուգիչ երկրաբանական և գնահատման աշխատանքների կատարում՝ գունավոր, ազնիվ և հազվագյուտ մետաղների քանակական պարունակությունները ճշգրտելու և կոնդիցիաներն ու արդյունաբերական նշանակությունները որոշելու համար, ինչպես նաև այդ շրջանների հարող ոչ մետաղական օգտակար հանածոների պաշարների գնահատում.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված հանքերևակումների տեղամասերի թևերում և խոր հորիզոններում որոնողա-հետախուզական աշխատանքների կատարում՝ գունավոր, ազնիվ և հազվագյուտ մետաղների նոր կուտակումներ հայտնաբերելու համար:

IV. Ծրագրային միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքները

1. Ունենալ հաստատուն ու անընդհատ համալրվող հանրապետական երկրաբանական ֆոնդ և օգտակար հանածոների հանքավայրերի և հանքերևակումների կադաստր:

2. Գունավոր, ազնիվ և հազվագյուտ մետաղների հանքային կուտակումների, ոչ մետաղական օգտակար հանածոների հայտնաբերման և նրանց արդյունաբերական նշանակության որոշման միջոցով լեռնահանքային արդյունաբերության գործունեության համար ունենալ հանքա-հումքային հենք:

V. Ծրագրի ֆինանսական ապահովումը և իրականացման սկզբունքը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի ուսումնասիրության միջոցառումների ծրագրի ֆինանսավորման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեից կհատկացվի 66 200 000 (վաթսուներեք միլիոն երկու հարյուր հազար) դրամ: